

ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ – ԿԱՐԾԻՔ

ՍՈՍԵ ՓԱՐԹՈՒՂԻ ԲՈՂՈՉՑԱՆԻ «ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԳՐԱԿԱՆ – ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆԸԸ 17-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԹԵԿՆԱԾՈՒՄԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ատենախոսության և սեղմագրի առաջին էջերում կարդալով մեր մասնագիտական խորհրդի անվանումը՝ «Ժ 01. 01. «Հայ միջնադարյան և նոր գրականություն», մեր ելույթը, ոչ առաջին անգամ, հարկադրված սկսում ենք բոլորիս ու ԲՈԿ-ին ուղղված մի հարցումով. արդյո՞ք մենք հին գրականություն չենք ունեցել, թե՞ կա հայոց հին գրականության առանձին խորհուրդ: Ամենքին հայտնի է, որ մեծավաստակ ակադ. Մանուկ Աբեղյանը հայ գրականության պատմությանը նվիրված իր կոթողային ու հիմնարար երկհատոր աշխատությունը վերնագրել է «Հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն»: Մտածելու բան իրո՞ք կա: Հարցը ներկայացնելով առաջիկա քննարկման՝ անցնենք ատենախոսության բնութագրմանը:

Հազվադեպ է լինում, որ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսությունն ունենա գիտական այնքան նորույթ և այնպիսի արժանիքներ, որքան Սոսե Բողոզյանի սույն աշխատանքը, որ հարուստ է հայագիտության համար անչափ կարևոր բացահայտումներով: Առաջին իսկ նախադասությամբ մեր այս գնահատումն ամենևին էլ չափազանցություն չէ, քանի որ հիմնված է ատենախոսության սկզբնաղբյուրների և այն մթնոլորտի մեր որոշակի ծանոթության վրա, որ հանդիսացել են ուսումնասիրության առարկան: Հայցորդը բարեխղճորեն քննել է ուշ միջնադարում միջնադարում՝ 17-18-րդ դդ. Իրանում, մասնավորապես՝ Սպահանի հարևանությամբ հիմնված, այժմ նրա հետ միավորված Նոր Ջուղայում ստեղծված պատմամշակութային հսկայական ժառանգությունը, պեղել է շատերիս համար անմատչելի ձեռագրեր ու վավերագրեր, որ պահվում են Սբ. Ամենափրկիչ վանքի Ներսես Ծնորհալու անվան, Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի ու Երևանի Մաշտոցյան մատենադարաններում, թեմային առնչվող հազվագյուտ հնատիպ գրքեր, պատկանելի քանակությամբ բանասիրական-գրականագիտական գրականություն, համացանցային տասնյակ կայքէջեր և դրանց մանրակրկիտ ուսումնասիրությամբ է հայտնաբերել ու գնահատել գրական ու մշակութային շատ իրողություններ, տարբեր պատճառներով անհայտ մնացած հեղինակների ու նրանց ստեղծագործությունների գեղարվեստական ու գրապատմական արժեքը:

Անկարելի է սույն աշխատանքը դիտարկել Նոր Ջուղայի իրանահայ գաղութի պատմությունից անկախ, որովհետև այնտեղ ու նրան զուգահեռ են ստեղծվել պատմամշակութային, գեղարվեստական ու գրապատմական այն արժեքները, որոնց ուսումնասիրությունն ու գիտական արժևորումն է սույն աշխատությունը: Այդ գաղթավայրի պատմության հանգամանալից ներկայացումն, իհարկե, մեր խնդիրը չէ, սակայն պարտավոր ենք գոնե հիշել, որ պատմական անբարենպաստ հանգամանքների բերումով ուշ միջնադարում՝ հակառակ հայ նոր գրականության սկզբնավորումը դեպի 17-րդ դար՝ Մ. Աբեղյանի բնորոշմամբ՝ «ամենից անկյալ, խոպանացյալ» ժամանակներ տեղափոխել փորձողների ցանկության, բուն Հայաստանում պարսկաթուրքական ավերիչ պատերազմների հետևանքով հայ գրականության, մամուլի, գրատպության և մշակույթի այլ ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմաններ ու հնարավորություններ գրեթե չկային: Փոխարենը՝ տարտղնված, աշխարհի լայնքով ու երկայնքով սփռված հայ ժողովրդի գիտությունն ու մշակույթը զարգանում էին գաղթավայրերում՝ Հնդկաստանում, Իրանում, Թուրքիայում, Ռուսաստանի հարավում և հյուսիսում, Ուկրաինայում, եվրոպական երկրներում՝ Իտալիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում, Նիդեռլանդներում և այլուր: Այս ամենի մեջ, սակայն, իր առանձնակի տեղն է ունեցել և այժմ էլ ունի Իրանի հայ գաղութը, որը, ստեղծված լինելով անհիշելի ժամանակներից, ավելի հայառիճ դարձավ 17-րդ դարասկզբին՝ Շահ Աբբասի 1604 թ. գարնանային արշավանքի հետևանքով: Շահը մի քանի հարյուր հազար հայերի (այս թիվը աղբյուրներում և հանրագիտարաններում տատանվում է 300 հազարից մինչև 500 հազար) բռնությամբ Պարսկաստան գաղթեցրեց իր երկրում առևտուրը, արհեստները, գիտությունն ու մշակույթը զարգացնելու նպատակով: Մազանդարանում և Սպահանի նահանգում՝ Նոր Ջուղայում ու նրա շրջակայքում՝ Փերիա գավառում հիմնվել են 57 հայաբնակ գյուղեր: Կենտրոնն, իհարկե, Նոր Ջուղան էր, ուր այժմ էլ գործում են հայ դպրոցներ ու մշակութային կենտրոններ: Մեզ 2008 թ. բախտ է վիճակվել այնտեղ՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի նախագծով 1905 թ. կառուցված Գևորգ Զանանյանի անվան դպրոցում, ինչպես և մայրաքաղաք Թեհրանում վարել իրանահայ դպրոցների հայերենի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Այս առիթով էլ մոտիկից ծանոթացել ենք Նոր Ջուղայի մարդկանց ու նրա պատմամշակութային հրաշալիքների մի զգալի մասին՝ Սուրբ Ամենափրկիչ, Սուրբ Գևորգ և շրջակա տասնյակ վանքերին, Նոր Ջուղայի հռչակավոր թանգարանին, ուր բազմաթիվ պատմամշակութային արժեքների հետ միասին ցուցադրվում են մեծ քանակությամբ մագաղաթյա գրչագիր ծաղկած մատյաններ: Ծանոթացել ենք Իրանում ու ողջ Միջին Արևելքում Խաչատուր Կեսարացու հիմնած առաջին տպարանին, ուր դարբին Հակոբջան Ջուղայեցին, Յոհան Գուտենբերգի տպար-

գրության գյուտից անկախ, ինքն էր ստեղծել տպատառեր, տպագրական մեքենա ու մամուլ և գրքեր տպագրել: Ծանոթացել ենք այն դպրոցին, որտեղ դասավանդել է Մեսրոպ Դավթյան - Թադիադյանը, նաև այժմ գործող այն Ներսես Շնորհալու անվան գրադարան-մատենադարանը, որի մուտքի առջև կանգնեցված են Հովհաննես Շիրազի և Պարույր Սևակի արձանները: Բնական է, որ այս իրողությունը մեծացնում է Նոր Ջուղայում պարսկահայերի ստեղծած գրական-մշակութային հսկայական, սակայն մեզ միայն մասամբ ծանոթ ժառանգությանը նվիրված ուսումնասիրությունն ըստ էության արժևորելու մեր իրավասությունը:

Անհամեմատ մեծ է, անշուշտ, ատենախոսության հեղինակի՝ Սոսե Բողոզյանի իրավագորությունը: ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնը, երբ մենք էինք նրա վարիչը, հենց այս հայցորդին, նրա ունակություններն ու հնարավորությունները (սպահանցի լինելու և միջնակարգ կրթությունն այնտեղ ստացած լինելու հանգամանքը, պարսկերենին, պարսկական միջավայրին, հայ-պարսկական գրական - մշակութային առնչություններին քաջածանոթ լինելու հանգամանքները և նրա բանաստեղծական խառնվածքը) նկատի ունենալով՝ նրան է հանձնարարել այս թեման:

Եվ իսկապես էլ, նա գիտակի և հարազատի աչքով, սրտացավությամբ է քննել իրեն մատչելի սկզբնաղբյուրներն ու հարազատ գիտամշակութային ժառանգությունը, որը ցայսօր մասնակիորեն էր ուսումնասիրված: Իսկ սա էլ իր հերթին հայցորդի ուսումնասիրությանը, նրա արդյունքներին ու եզրահանգումներին հաղորդում է որոշակի հավաստիության՝ ատենախոսությանը տալով գիտական սկզբնաղբյուրի արժեք:

Ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից ու բառացանկից կազմված ատենախոսությունը հայցորդի՝ գիտական - ստեղծագործական աշխատանք կատարելու անվիճելի կարողության խոսուն վկայությունն է, և դա հաստատվում է հատկապես ատենախոսության շարադրանքով, որի գլուխներից յուրաքանչյուրը 17 - 18-րդ դդ. իրանահայ գրական - մշակութային կյանքի մի կարևոր բնագավառի խոր և համակողմանի գիտական արժևորումն է:

Արժե ընդգծել աշխատության և նրա հեղինակի մի կարևոր արժանիքը ևս: Միատարր չէ ուսումնասիրվող դարաշրջանի գիտամշակութային դաշտը, որ ստեղծել էին Նոր Ջուղայի աշխարհագրոս վաճառական - մտավորականները. գրչագրական արվեստ և նոր սկզբնավորված գրատպություն, տաղերգություն և հենց Նոր Ջուղայի ինքնատիպ աշուղական դպրոց՝ իր նշանավոր ներկայացուցիչներով, պատմագրություն և դիդակտիկ մանկավարժություն, որով հարկ էր պատրաստել նոր սերնդի վաճառականներին ու մյուս մասնագետներին:

Միմյանց շաղկապված, բայց ըստ էության տարաբևեռ հարցերի այս բազմազանությունն է թելադրել ատենախոսության բարդ կառույցը, որը դարաշրջանի մշակութային կյանքի մասին ամբողջական պատկերացում ապահովող ինքնատիպ համակարգ է: Այն հեղինակից պիտի պահանջեր ոչ միայն հիշյալ բնագավառների խոր ու համակողմանի իմացություն, նրանց փոխառնչությունները դիտելու կարողություն, այլև նյութի նպատակահարմար դասակարգում, գլուխների վերնագրերի ու ենթավերնագրերի ճշգրիտ բանաձևում, որով ապահովվեր ատենախոսությունում քննարկվող հարցերի ճիշտ հաջորդականությունը և նրա կառույցի գիտականությունը:

Առանց մանրամասների մեջ խորանալու՝ ի պատիվ հայցորդի պետք է ասել, որ նրա աշխատանքը հենց այդպիսին է՝ խոր ու բազմաշերտ վերլուծություն, գրեթե բոլոր ուշաբժան հարցերն ընդգրկող և դրանց տրամաբանական ու համոզիչ պատասխաններով երևույթի մասին գիտական պատկերացումն ամբողջացնող:

Աշխատանքում տրվում է հարցի պատմությունը, գնահատվում նախորդ ուսումնասիրողների (Լեո, Աս. Մնացականյան, Գարեգին. Լևոնյան, Լևոն Մինասյան, Հր. Միրզոյան, Վ. Սաֆարյան, Վ. Դևրիկյան և ուրիշներ) ներդրումը թեմայի մշակվածության մեջ, որն ուղենշային է եղել հայցորդի գիտական կողմնորոշումներում և դրականորեն ներագրել աշխատանքի բովանդակության հարստացման և գիտականության վրա:

Ավելին. ոչ միայն գրական-մշակութային կյանքի տարբեր բնագավառներն են արժանավորապես գնահատված, այլև բնութագրված են այդ ոլորտների ամենից նշանավոր ներկայացուցիչներն իրենց գործունեությամբ ու ստեղծագործություններով: Նշանավորների և հայտնիների հետ միասին շրջանառվում են նաև քիչ հայտնի կամ մոռացության մատնված մշակութային գործիչների անուններ, մաքրվում է մատենադարանների ձեռագրական հավաքածուներում, թանգարաններում, արխիվներում, հնատիպ գրքերի և մամուլի էջերում պահվող երկերը ծածկող մոռացության փոշին:

Եվ դարձյալ հայցորդի մի անհատական առավելության մասին. ուսումնասիրվող նյութը՝ նախապես հայտնի կամ նորահայտ, նա դիտարկել է թարմ հայացքով, գրական երկերի բովանդակության, մանավանդ չափածոյի գեղագիտական բնական զգացողությանը գումարվել են ԵՊՀ-ում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները, արդի գրականագիտության նվաճումների դիտանկյունից գրական երկերն արժևորելու կարողությունը: Այս ամենի շնորհիվ հաջողվել է աշխատանքը, որում, կարելի է ասել, հայցորդի գիտական նպատակադրումը լիովին իրականացված է:

Լայն են հայցորդի տեսադաշտն ու ընդգրկումը: Ազատ մտածողությամբ վերլուծելով գրական նորահայտ կամ հայտնի նյութերը՝ նա չի կաշկանդվել հայտնի կաղապարներով և կայացրել է ինքնուրույն ու համարձակ եզրակացություններ:

Այսպես, առաջին գլխի երեք ենթաբաժիններում հայցորդն անդրադարձել է Նոր Ջուղայում 1604 – 1605 թվականներից՝ հայահոծ գաղութի հիմնադրման և նրա գրական – մշակութային ու հանրային կյանքում Սբ. Ամենափրկիչ վանքի ու նրա դպրոցի խաղացած անգնահատելի դերին, որը դրսևորվել է հայրենիքից տեղահանված, ծանր փորձությունների, կորուստների ու տառապանքների բովով անցած և նոր միջավայրում արմատավորված, ամեն ինչ նորից սկսող հայության համախմբման, նրա հանրային – տնտեսական, գրական-մշակութային կյանքն ու նոր սերնդի կրթության գործը կազմակերպելու մեջ: Ժամանակին դեռ Մեսրոպ Թաղիադյանն է նկատել, թե ինչպես Փերիա գավառ տարված վրացիները իրենց հավատն ու ազգությունը դյուրությամբ ուրացան, մինչդեռ հայերը մաքառելով դիմակայեցին: Սբ. Ամենափրկիչ վանքի լուսավորչական հոգևորականները, որպես հայապահպան զինվորներ ու բարձրակարգ ուսուցիչներ՝ ոչ միայն ստանձնեցին նոր սերնդի կրթության ու դաստիարակության գործը, այլև դավանաբանական բուռն ու արդյունավետ պայքար մղելով կաթոլիկացման դեմ՝ հերոսաբար իրականացրին իրենց վսեմ առաքելությունը: Վանքի դպրոցի առաջին իսկ շրջանավարտներն այնքան էին բարձրորակ, որ նրանցից մի քանիսը դարձան հաջորդաբար ամենայն հայոց կաթողիկոսներ, ոմանք՝ համայնքի կյանքը աշխուժացնող նորահարուստ վաճառականներ, ոմանք խորացան աստվածաբանության ու փիլիսոփայության մեջ, շատերն էլ դարձան գրական ու մշակութային երևելի գործիչներ: Հենց նրանք էլ Նոր Ջուղայում զարկ տվեցին գրչագրությանը, ստեղծեցին այն դասագիրք – մատյանները, որոնցով կրթվում էին նոր սերնդի վաճառականները և հայ համայնքի գաղութային կյանքի բոլոր ոլորտներին անհրաժեշտ տարաբնույթ մասնագետները:

Հայցորդը ևս 17-րդ դարը համարում է իրանահյուսության գրական-մշակութային կյանքի ոսկեդար, որովհետև իսկապես բուռն զարգացում էին ապրում գիտության ու մշակույթի, արհեստների ու արվեստների գրեթե բոլոր ճյուղերը: 1607 թ. Հակոբ Երեցի առաջին մատյանով սկսվում և մինչև 1930 թ. Հակոբ Հայրապետյանի վերջին մատյանով ավարտվում է Նոր Ջուղայի՝ շուրջ երեքուկես դար տևած գրչագրական դպրոցի պատմությունը: Իսկ Խաչատուր Կեսարացու ջանքերով հիմնված տպարանը առաջինն էր ոչ միայն Իրանում, այլև ողջ Միջին Արևելքում. փաստորեն այդ տարածաշրջանում նրանով սկսվեց ու զարգացավ գրատպությունը: Հայցորդը փաստերով հավաստում է, որ գրատպությունն ու կազմարարական արհեստն այնքան բարձր մակարդակ են ունեցել նոր Ջուղայում, որ Էջմիածնի Մայր աթոռից

գրքերն ուղարկում էին Նոր Ջուղայի կազմարարներին և հետ ստանում որպես կատարելություններ: Նշվում է 744 այդպիսի գիրք: Հավելենք նաև, որ հայցորդը հրապարակել է Նոր Ջուղայի տպարանում 17-րդ դարում տպագրված հնատիպ գրքերի ճշգրտված ցուցակները:

Կարևոր ենք համարում նաև երևույթներն ու իրողությունները նոր մոտեցմամբ սթափ գնահատելու հայցորդի անվիճելի կարողությունը: Գաղտնիք չէ, որ Սբ. Ամենափրկիչ վանքի դպրոցում կրթված վաճառականներն էլ դարձել են տեղի առաջին հայ հարուստները, որոնք հովանավորել են թե՛ գրչագրությունը, թե՛ որմնանկարչությունը, թե՛ գրատպությունը, թե՛ գիտության ու արվեստի մյուս ճյուղերը:

Հոգևորականների հետ միասին ատենախոսության հեղինակը գնահատել է և այն վաճառականներին, որոնք դարձել են մանկավարժներ և ստեղծագործել են՝ գրելով գեղարվեստական, խրատական և դիդակտիկ-ուսուցողական երկեր; «Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը և Կոստանդ Ջուղայեցին» ենթագլխում վերլուծելով Կոստանդ Ջուղայեցու՝ որպես դասագիրք գործածված «Աշխարհաժողով» մատյանում ընդգրկված նյութերը՝ հայցորդը նկատում է, որ Կ. Ջուղայեցին կարևորել է նաև ապագա վաճառականի համակողմանի զարգացման համար անհրաժեշտ հոգևոր, գեղարվեստական ու խրատական նյութերի առկայությունը: Դրանցում Ջուղայեցին դրվատում է աստվածավախ վաճառականի ազնվությունն ու բարությունը և դատապարտում ազահություն ու խաբեությունը. տե՛ս, օրինակ, «Աշխարհաժողով»-ում ընդգրկված երեք բանաստեղծությունների քննությունը 36 - 44 էջերում: Ի դեպ, թե՛ այս, թե՛ մյուս դեպքերում հայցորդը ատենախոսության համապատասխան էջերում գետեղել է քննարկվող ձեռագրերի կամ հնատիպ գրքերի լուսապատճեններ, որոնք մեծացնում են նրա գիտական հավաստիությունը (տե՛ս, օրինակ, նշված էջերը):

Վաճառական Կ. Ջուղայեցին խորապես գրական մարդ է եղել նախքան Ամենափրկիչ վանքի դպրոցի ուսուցիչ դառնալը: Մինչ այդ նա Եվրոպայից 259 անուն գիրք էր տեղափոխել Նոր Ջուղա:

Երկրորդ գլուխը նվիրված է Նոր Ջուղայի հռչակավոր հայ աշուղական դպրոցին, որն իրականում առաջինն է և նախորդել է բոլոր նմանատիպ դպրոցներին Թիֆլիսի, Աստրախանի, Ալեքսանդրապոլի, Երևանի և այլն: Այս գլուխը թերևս ավելի հաջողված է, քանի որ, ինչպես երևում է շարադրանքից, ի տարբերություն շատ աշուղների և աշուղագետների՝ Ս. Բողոզյանը հիանալի գիտի աշուղական արվեստի գաղտնիքներն ու առանձնահատկությունները, աշուղական դպրոցների, բանաստեղծական տեսակների, նրանց կառույցների, տաղաչափական ձևերի և մեղեդիների համապատասխանության սկզբունքները: Այս գլուխն սկսվում է **աշուղ** հասկացության ծագումնաբանության քննությամբ, որը գնում - հասնում է մինչև շումերական

արձանագրություններ, որով հասկանալի է դառնում **աշուղ - գուսան** հարաբերությունը, որ շատերը կա՛մ շփոթում են, կա՛մ նույնացնում այսօր էլ: Արաբական ծագում ունեցող **աշրղ** կամ **աշեղ** բառը, որ Հովհ. Թումանյանի համոզմամբ էլ **սիրահար, բանաստեղծ, երգիչ** է նշանակում, ժողովրդական երգչի այն տեսակն է, որ նվագում է և երգում այս կամ այն ընդունելի կայուն եղանակով և, ինչպես հայցորդն է ճիշտ բնորոշում, իր անհատականությունն է դրսևորում վերջին տան կամ բեյթի մեջ իր անվան հիշատակումով:

«Վահագնի ծնունդը» և մյուս վիպասանքներն ստեղծած գուսաններին բնորոշել է Մ. Խորենացին: Նրանք են ստեղծել ժողովրդական սիրո, աշխատանքային, պանդիտության կամ դարիքության, երգերը, լայաց երգերը կամ սգերգերը, մեր հերոսական էպոսն ու միջնադարյան վիպերգերը: Առաջին հայ աշաղուները, որ հանդես են եկել 15-16-րդ դարերում, եղել են անհատներ, երգել են մեջլիսների պաշտոնական լեզվով՝ թուրքերենով, և դպրոց չեն ստեղծել, ինչպես 15-րդ դարի վերջում հանդես եկած Դուլ Օղլի Երզնկացին: Նոր Ջուղայի հայ աշուղները 17-րդ դարում դպրոց են ստեղծել և ունեցել են հետևորդներ նաև 18-19-րդ դարերում ստեղծված մյուս դպրոցներում: Աշուղի և գուսանի տարբերությունը, այսպիսով, հստակ է, իսկ շփոթությունը ընդհանրությունների և նմանությունների պատճառով է:

Ավելորդ չէ ասել, որ Սոսե Բողոզյանն ուսումնասիրել է մեծածավալ աշուղական ու աշուղագիտական գրականություն և պարսկահայ աշուղների ստեղծագործությունների քննությամբ կատարել կարևոր ճշտումներ: Կենտրոնանալով Նոր Ջուղայում դպրոց հիմնած նշանավոր աշուղների՝ Հարթուն Օղլիի, Դուլ Էգագի, Բաղեր Օղլիի, Ամիր Օղլիի և ուրիշների ստեղծագործությունների վրա՝ հայցորդը նախ ցույց է տալիս պարսկական աշուղական տաղաչափական կայուն ձևերի՝ ղոշմա, մուխամմազ, թեջնիս, դասթան, գալանտերի, սեմայի, դագալի և այլն, անմիջաբար պարսկական ակունքից հայացման գործընթացը և դրա շնորհիվ՝ իրանահայ աշուղների բարձր մակարդակը, ապա դիտարկում է նրանց սիրո և խոհախրատական երկերի գեղարվեստականության խնդիրները՝ դարաշրջանում նրանց պահանջարկի և գեղագիտական պահանջմունքների բավարարման տեսանկյունից:

Պակաս հետաքրքիր չէ և ատենախոսության երրորդ՝ «Տաղերգության և պատմագրության էջեր» գլուխը: Այստեղ քննվել ու արժևորվել են մի ինքնատիպ հեղինակի՝ Ստեփանոս Դաշտեցու տաղերը, հանելուկները, բանավեճերն ու զրույցները: Արժե հիշել, որ մեր գիտամանկավարժական գործունեության սկզբում՝ 1970-ական թթ., ուսուցիչներիցս մեկը՝ պրոֆ. Ալ. Մարգարյանը, որպես ուսումնասիրության թեմա առաջարկում էր Ստեփանոս Դաշտեցի հեղինակին: Սակայն ուրիշ հեղինակներ են եղել մեր գիտական հետաքրքրությունների կիզակետում, և մեր չարածն այսօր մեզ է ներկայացնում հայցորդը: Հայցորդը թե՛

այս հեղինակին և թե՛ հայ դասական պատմագրության լավագույն ավանդները 18-րդ դարում շարունակած Ստեփանոս Երեց պատմագրի «Հանգիտագիրք» աշխատությունը ներկայացրել է արժանավորապես՝ ունենալով նրանց ստեղծագործությունները սկզբնաղբյուրներով ուսումնասիրելու հնարավորություն և տալով նրանց գիտական գնահատական:

Քաղվածքները դյուրընթեռնելի դարձնելու համար Սոսե Բողոզյանը դրել է նաև բառացանկ՝ բարբառային, գրաբար և օտար բառերի բացատրություններով:

Այս արժանիքների կողքին նկատվում են և աշխատանքի գիտական լուրջ արժեքը ամենևին չնսեմացնող գուտ տեխնիկական բնույթի մի երկու վրիպում՝ սեղմագրի 3-րդ էջում՝ հենց առաջին պարբերության 2-րդ տողում **բացառությամբ** բառը տպվել է վրիպակով՝ **նր**, վերջավորությամբ, մինչդեռ թե՛ սեղմագրում, թե՛ ատենախոսության մեջ **ա** ներքին հոլովման բոլոր գոյականները ճիշտ գործածված են գործիական հոլովի **մբ** վերջավորությամբ: Ուրեմն՝ վրիպակ է և պարզ անզգուշության հետևանք: Նույնպիսի վրիպակ է և բառացանկում այբբենականության խախտումը, որն առաջացել է նոր բառեր ավելացնելու հետևանքով:

Ամփոփելով ասենք, որ առաջարկում ենք այս արժեքավոր ատենախոսությունը հրատարակել որպես մենագրություն: Դրա կարիքը կունենան թե՛ ուսանողությունը, թե՛ մասնագետները և թե՛ առհասարակ բանասիրական գիտությունը:

Մեր մյուս առաջարկությունը միջնորդություն է «Գրականագիտություն 012» մասնագիտական խորհրդին. Սոսե Փարթոլի Բողոզյանին «Նոր Ջուղայի գրական-մշակութային կյանքը 17 – 18-րդ դարերում» աշխատության համար շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը և ներկայացնել ԲԿԳԿ-ին՝ հաստատելու խորհրդի որոշումը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝  Ս. Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Պրոֆեսոր Ս. Մուրադյանի ստորագրությունը հաստատում են՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան՝  Ա. Մ. ԳԱԼՍՅԱՆ

բան. գիտ. թեկնածու, դոցենտ

03. 05. 2024